ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Գ Ի Տ Ու Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «19» ապրիլի 2018 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 17-Ա/Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՆՐԱՆՑ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 13-ի N 1532-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 18-ի N 1269-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 12-րդ կետի 4-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կազմում ստեղծել քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ և հաստատել դրանց անհատական կազմը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել Կոմիտեի քաղաքացիական պաշտպանության կազմավորումների գործառույթները՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ղեկավարներին՝ խմբերում ընդգրկված անձնակազմի հետ պարբերաբար անցկացնել պարապմունքներ և ապահովել խմբերի գործառույթների կատարման մշտական պատրաստությունը:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Կոմիտեի գլխավոր քարտուղար, քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ Լևոն Մարդոյանին:
5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ կրթության և գիտության նախարարության
գիտության կոմիտեի նախագահի
2018 թ. ապրիլի 19-ի N17-Ա/Ք հրամանի

Կ Ա Զ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1. Կապի և ազդարարման կազմավորում

1. Յուրի Պետրոսյան – կազմավորման հրամանատար
2. Ռուզան Անանյան – անդամ
3. Լիլիթ Պետրոսյան – անդամ

2. Հասարակական կարգի պահպանման կազմավորում

1. Հակոբ Սարգսյան - կազմավորման հրամանատար
2. Աննա Մկրտչյան - անդամ
3. Աստղիկ Մելիք-Քարամյան – անդամ

3. Փրկարարական և վթարա-վերականգնողական կազմավորում

1. Հարություն Սարգսյան – կազմավորման հրամանատար
2. Վահրամ Ներսիսյան - անդամ
3. Խաչատուր Մարգարյան- անդամ

4. Պաշտպանական կառույցների սպասարկման կազմավորում

1. Կարեն Ղարիբյան – կազմավորման հրամանատար
2. Անի Վիրաբյան - անդամ
3. Արևիկ Խնկոյան - անդամ
4. Նաիրա Սուքիասյան – անդամ

5. Առաջին բուժօգնության կազմավորում

1. Գոհար Մելիքսեթյան - կազմավորման հրամանատար
2. Շուշանիկ Աղաբեկյան – անդամ
3. Լուսինի Մարտիրոսյան- անդամ

Հավելված N 2
ՀՀ կրթության և գիտության նախարարության
գիտության կոմիտեի նախագահի
2018 թ. ապրիլի 19-ի N17-Ա/Ք հրամանի

Գ Ո Ր Ծ Ա Ռ Ույ Թ Ն Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

1. Կապի և ազդարարման կազմավորում

1) իրականացնում է աշխատակիցների ազդարարումը արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում,

2) ազդարարումն ու իրազեկումն իրականացվում են կապի և ազդարարման բոլոր միջոցներով՝ էլեկտրաշչակների և բարձրախոսային (ստացիոնար և շարժական) սարքերով, հեռախոսակապով, այդ թվում՝ նաև բջջային կապի կարճ հաղորդագրությունների (sms) միջոցով (առավելագույնը 15 րոպեի ընթացքում),

3) **«Օդային տագնապ»** ազդանշանի դեպքում էլեկտրաշչակների միջոցով տրվում է ընդհատվող (տատանվող) ձայնային ազդանշան (2-3 րոպե տևողությամբ), միաժամանակ բարձրախոսներով տրվում է **«Օդային տագնապ**: **Պատսպարվել պաշտպանական կառույցներում**» բովանդակությամբ համապատասխան հաղորդագրություն,

4) **«Ուշադրություն բոլորին»** ազդանշանի դեպքում էլեկտրաշչակների միջոցով տրվում է չընդհատվող ձայնային ազդանշան (2-3 րոպե տևողությամբ), միաժամանակ ազդարարման միջոցներով տրվում է «**Ուշադրություն բոլորին, ուշադրություն բոլորին ……..»** բովանդակությամբ համապատասխան հաղորդագրություն:

2. Հասարակական կարգի պահպանման կազմավորում

1) ստանալով տարահանման մասին ազդարարում հետևում է Կոմիտեի տարահանման կարգով նախատեսված սխեմայով աշխատակիցների աշխատավայրից դուրս գալուն,

2) միջանցքներում կազմակերպում է աշխատակիցների ելքը դեպի դուրս' բացառելով խուճապը և անկարգությունները,

3) պահպանում է հասարակական կարգը Կոմիտեում, տարահանման հավաքակայաններում և տեղաբաշխման վայրերում ու տրանսպորտային երթուղիներում, պաշտպանական կառույցներում:

3. Փրկարարական և վթարա-վերականգնողական կազմավորում

1) աշխատակիցների շարժման ճանապարհների և փրկարարական աշխատանքների իրականացման շրջանի հետախուզություն,

2) հրդեհների մեկուսացում և մարում փրկարարական աշխատանքների իրականացման շրջանում և մատույցներում,

3) տուժածների որոնում և նրանց դուրսբերում վնասված և հրդեհվող կառույցներից, փլատակների տակից, օդի ախտոտվածությամբ սենյակներից,

4) վնասված շինությունների բացում և այնտեղ գտնվող մարդկանց փրկում,

5) տուժածների և փրկվածների տեղափոխում անվտանգ տարածություններ:

4. Պաշտպանական կառույցների սպասարկման կազմավորում

1) նախապատրաստում է պաշտպանական կառույցները մարդկանց ընդունելու և տեղավորելու համար՝ հրթիռա-ռմբային հարվածների անմիջական վտանգի դեպքում,

2) «Օդային տագնապ» ազդանշանի դեպքում ղեկավարում է մարդկանց տեղաբաշխումը պաշտպանական կառույցներում,

3) օդային տագնապի ավարտից հետո ղեկավարում է մարդկանց դուրսբերումը պաշտպանական կառույցներից:

5. Առաջին բուժօգնության կազմավորում

1) իրականացնում է սանիտարահամաճարակային վիճակի հսկողություն շինություններում և պաշտպանական կառույցներում,

2) ցուցաբերում է հրատապ նախաբժշկական, հրատապ բժշկական, շտապ բուժօգնություն տուժածներին,

3) տեսակավորում է տուժածներին՝ հետագա բուժօգնության հերթականությունը որոշելու համար,

4) աջակցում է բուժաշխատողներին՝ տուժածներին բժշկական օգնություն ցուցաբերելիս: